

գին Մարաց՝ շնորհիւ Մատթէոս պատրիարքին :

«(1847) Քանի ամօք ինչ յառաջ անողորմ եւ ապտամբ ազգն Մարաց ունելով ի գլուխ իւրեանց զՍան Մահմուտ եւ զՊէտէրխան պէյ, հարստահարէին զբանակիչս Վանայ եւ Տարօնոյ եւ շրջակայ գիւղօրէիցն, կողոպտէին զվանօրայս եւ զեկեղեցիս, կեղեքէին եւ սպանանէին. եւ կուսակալն Կարնոյ եւ բրդէշին Վանայ յանգէտս լինէին զչարագործութեան նոցա. եւ ոչինչ փոյթ էր նոցա, թերեւս եւ ինքեանք առնըւին զբաժինս իւրեանց յաւարէ անտի՝ զոր կողոպտէին նոքա եւ ոչ զղէմ ունէին նոցա կամ պատերազմաւ եւ կամ ահացուցմամբ :

«Լուեալ զաղէտս սոցին Մատթէոս պատրիարք, բողոքս եբարձ երկիցս ի Բ. Դուռն, եւ յերրորդումն նուագի գրեաց, եթէ բնակիչք Վանայ ոչ կարելով այլեւս տոկալ անըմբեր տառապանաց՝ զոր հասուցանեն Մարք ի վերայ նոցա, որոչեալ են ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ եւ զաղթել՝ ի Ռուսաստան. եւ որովհետեւ ինձ յանձնեալ է ի բարձրագոյն տէրութենէ ձերմէ հսկել ի վերայ նոցա, եւ զգուշանալ ելից եւ մտից նոցին, պարտ անձին վարկայ կանխաւ աղբ անել տէրութեան ձերում, զի մի առ յապայս յանցաւոր գտանիցիմ առաջի ձեր :

«Առ այս խորհուրդ արարեալ ի Բ. Դուռն, պատրաստեցաւ կազմեցաւ բանակ պատերազմող զօրաց, եւ սպարապետ կարգեցաւ Օսման փաշայն քաջ եւ զօրաւոր. եւ զիմեաց ի վերայ սպատամբացն այնոցիկ ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ նուաձել զնոսս անճողոպտելի վախըստեամբ :

«Յանժամ գրեաց եւ Մատթէոս պատրիարք առ առաջնորդս Տիգրանակերտի, Բաղէշու, Բայուլայ, Կարնոյ, եւ Վանայ, զի ժողովուրդք իւրեանց ելցեն ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչեւ ցարդ, յամենայնի օգնական լիցին եւ ծառայեսցեն արքունի բանակին, եւ զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի :

Ժողովեցան Հայք Վասպուրական աշխարհին, եւ մարտ եղեալ յարձակեցան ի վերայ

ձէզիրէ նահանգին, ուր որջացեալ ամբացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, եւ այնչափ ի նեղ արկին զՊէտրիխան պէյ նոցա, մինչեւ յոգիս լինել նմա ապաստան, եւ յուսահատեալ յանձնեաց զինք սպարապետ Օսման փաշային հանդերձ իւրով զերդաստանան, որ իսկ եւ իսկ առաքեաց զամենեսին զնոսս ի Կոստանդնուպոլիս, եւ տիրեաց ամբողջ նորուն, եւ Պատրիխան պէյ աքսորեցաւ ի Կրետէ կղզին ընտանեօք իւրովք :

«Իսկ Սան Մահմուտ գլխաւորն Մարաց ըմբռնեալ ի վանցի հայոց եւ կայանաւորեալ յանձնեցաւ ի ձեռս Օսման փաշային, եւ ածեալ ի Կոստանդնուպոլիս ընտանեօք իւրովք աքսորեցաւ ի Սիլիստրէ. եւ բազումք յապտամբացն մատնեցան ի սուր եւ մնացեալքն ցրուեցան ի կողմանս ռուսաց եւ պարսից» : (Աւետիս Պէրպէրեան, «Պատմութիւն Հայոց», էջ 321-322) :

Չափազանցութիւն մըն է անշուշտ Աւետիս Պէրպէրեանի այն յայտարարութիւնը, որ իւր թէ հայոց պատրիարքի բողոքի վրայ թրքական կառավարութիւնը որոշած է Քիւրդիստան զըրկել Օսման փաշայի բանակը : Թուրք կառավարութիւնը Մատթէոս պատրիարքի դիմումով չէր, որ մօտ 100,000 զօրք շրաժման մէջ պիտի զնէր : Բէդիրխան բէյի կազմած զաշնակցութիւնը հետզհետէ իրական տէրը կը դառնար բուն Քիւրդիստանին եւ հարաւային Հայաստանին : Այս խոշոր քաղաքական վտանգին դէմ էր որ օսմանեան կառավարութիւնն իր ամբողջ թափովը հրապարակ կուզար :

Հոս պէտք է շեշտել այն որ Թուրքիան այդ տեսնները աւելի ազատ էր կաշկանդումներէ : Եզիպտական ուժերը քայքայուած էին : Թուրքիոյ տիրապետութիւնը ընդարձակուած էր դէպի Արաբիա : Մէկ խօսքով, Թուրքիան շնորհիւ եօթը տարուան զինադադարին, կրցած էր ազատիլ Իրրահիմ փաշայի հասցուցած մահացու հարուածներէն, եւ ինքզինքը ամփոփած՝ կ'ուզէր իր վերջնական տիրապետութիւնը խարըսիւն Հայաստանի եւ Քիւրդիստանի մէջ :

(Շարունակելի)